

11-12-1899  
ՅԻԻ



Վ. իմ. ս. սպ. առ. սն. ՄՆՏԻՎՆՈՆ ԵՂԲԱՐՅ — ԳՈՂԻՐԷ

## “ՓԻՒՆԻԿ, Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ Գին եւ 15ին:
- 1.—Տոնմայիս կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսում, նասիրութիւններ. Հայոց զաղրային հոսանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
  - 2.—Արձակ եւ ոսանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու քարզմանութիւն:
  - 3.—Գիտական նորութիւններ, կես-ժանօր ժողովրդոց կեանքէն ու բարեքն մանրամասնութիւններ, հոչակաւոր երկրախոյզներու երկերէն քաղուած:
  - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
  - 5.—Կիսամտեայ ընդհ. քաղաքական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեղեկութիւններ:
  - 6.—Արտասահմանի եւ գաւառական քրթակցութիւններ:

### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար . . . . .	Տարեկան . . . . .	Փր. 10
» » . . . . .	Վեցյուսակայ . . . . .	» 6
Արտասահմանի համար . . . . .	Տարեկան . . . . .	» 13
» » . . . . .	Վեցյուսակայ . . . . .	» 7
Կովկասի համար . . . . .	Տարեկան . . . . .	լուրք 5

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլը. — Ճ.  
 Գահիրէի հայութիւնը. — ԴՊՐՈՅԱԿԱՆ ՄԸ  
 Լեռնականի մը Յուշատետրը: ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ  
 Քննարկի ուրուագծեր. (Իսկէն) — ԴԻՄԱԿ  
 Պանդուխտին սէրը. — ԱՍՊԵՏ

Ալիճալտո. — Ս. Ս.  
 Թուրքիական ՄԻՐԻԿ  
 Ա.Գ. Գրօնիկ  
 Լրաբաղ

Չեռագիրները ետ չեն զարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր:  
 Նամակ, յղումն ու բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ԲԻՒՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE ՓԻՒՆԻԿ  
 INSTITUTION CENTRALE

LE CAIRE

ԵԳԻՊՏՈՍ  
ՏՐԵԿԱՆ... 10  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 6  
ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՈՒԿ Է

# ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀԱՆ  
ՏՐԵԿԱՆ... 13  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 7  
ԿՈՎԿԱՍ  
ՏՐԵԿԱՆ ՐԱՅԻ 5

Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ա Յ    Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏՈՐԻ

1 ՅՈՒՆԻՍ 1899

ԹԻԻ 7

## ՄԱՄՈՒԼԸ

Քննադատութիւնը՝ կեանքը վարող զվաւոր ուժերէն մէկն է:

Ստեղծում ու վերլուծումը, երկու անհրաժեշտ պայմաններն են մտքի արտադրութեան համար:

Արդարեւ քննադատութիւնն է որ, փորձառութեան օրէնքներով զինուած՝ երևակայութեան ծրագրերները կը մերկայնէ իրենց ցնորական զարգարանքէն, և կը վերածէ զանոնք ամենազարգ ձեռն:

Ուտի անօգուտ չ'է ճշգեւ, գէթ իբր փարձ, հիմնական սկզբունքները, որոցմէ պէտք է առաջնորդուի քննադատութիւնը:

Ասոր համար, անհրաժեշտ է լրջօրէն քննել յաջորդական հանգրուաններն ուրկէ մարդկային մտածումն անցած է իր պատմական բարեչրջութեան ընթացքին մէջ:

Քննադատութիւնն իր ամբօջական առումով ունի երկու ձև, իր անցուցած երկու շրջաններուն համապատասխան. առակական և գիտականը:

Առաջին ձևը, սպէտ, կրքոտ, կողմնակալ և ինքնահաւան, տեսած է մինչև փորձառական մէթոտին գիւտը, որ դարազրուի բացառ մարդկային

մտածումի պատմութեան մէջ, և որ կը տեւ մինչև հիմա, մանուկ զրականութեանց մէջ: — Երկրորդ շրջանը՝ կրքի բռնապետութեան վրայ՝ զրականութեան տարած յաղթանակովը կը ստանայ սեպհական ու կատարեալ ձևը:

Վօլթէրի կը պարտինք պատմական — քննադատութեան արուեստին առաջին բարեփոխութիւնները: Յետոյ մեր օրերը, Թէն, — արդի մտածումին վարպետներէն մին, — հաստատեց զրական քննադատութիւնը գիտական, հիմերու վրայ, և անոր վարդապետութեան վերջնական ձևը տուաւ:

Որովհետև զրականութիւնը կերպով մը հաւաքական կեանքին մտաւոր արտայայտութիւնն է, զրական ու բարոյական քննադատութիւնները կը հպատակին նոյն ընդհանուր օրէնքներուն. խօսելով առաջինին վրայ, քննուած պիտի ըլլայ նաև հանրային խնդիրներու ուղղման սիրութիւնը որ մասնուլի միակ առարկան է ու պարտի ըլլալ:

Արդ մին այն մտքը — ճշմարտութիւններէն, որոնց վրայ հիմնուած է զրականութիւնը, այս է. ինչ որ կայ բացարձակ՝ սա ճշմարտութիւնն է թէ՛ ոչինչ կայ բացարձակ՝ իրականութեան մէջ:



ները. դարուն տիրապետող հաւատքը, ընթացիկ գազափարներուն գերակշիռ հոտանքները, ազգային աւանդութիւնները, սովորոյթները, ցեղային հանճարը, ծնողավայրին դիրքը, կլիմայական պայմանները, ֆիզիքական խառնուածքը, վերջապէս այն շարժառիթները որոնք զինք մկած են գործի, և այն հոգեկան տրամագրութիւնն որուն տակ գործած է:

Քննադատութեան այս կերպ ըմբռնումն է որ մեզի կրնայ ընձեռել արուեստին գազանիքները, և լոյս մը պարզել այն խորհրդաւոր երկունքին վրայ որ հրաշակերաններու ծնունդ կ'ուտայ: Մեծ գէմքերու այս կերպ վերլուծումն է որ մեզի կ'առաջնորդէ իտէպի կեանքին ուղիղժին գէպ ի հիմնական կանոնները: Մէկ բառով քննադատութեան այս ձեւն է որ կրնայ իրապէս օգտակար ըլլալ և մեր փորձառութիւնը հիմնել գիտական հետեւաբար. անխախտ հիմերու վրայ:

Ճ.

### ԳԱՆՔԻ ԶԱՅՈՒԹԻՒՆԸ

Կլատութուն, որ արծաթապաշտութիւնը ներկայ սերնդին ուտիճը կ'անուանէր, ինչ անուն պիտի տար այն ախտին որով վարակուած է Գահրէի հայութիւնը: Ընդհանրապէս օտարամոլութիւն կ'ըսենք անոր, և աւելի ճիշդը ազգասեցութիւն, նկատելով որ ազգութիւնը պահելու և զօրացնելու հորիկաւոր բոլոր միջոցները չ'են պակասիր այս քաղաքին մէջ, և պակասածը միայն զգացումն է ազգային անձնուիրութեան՝ տեսականին մէջ, և բարոյական վեհանձնութեան՝ գործնականին մէջ:

Այս մոլութիւնն ընդհանրապէս մեծերուն քով կայ ո՛չ թէ պզտիկներուն. ահա՛ թէ ինչպէս. գպրոցական շրջանները կը վերսկսին, ամեն տուն

խլրաուք մը կայ. շփոթած մնացած են. հայրը կը հարցնէ զուկին.

— Տղաս, ո՞ր գպրոցը կերթաս. և կ'սկսի կարգաւ համբել անգլիական, արաբական, ֆրանսական վարժարանները, որոց ինքն անունները լսած է լոկ:

— Մայրերը, պէտք է գիտնալ, համբմունջ հետեւողներ են հայրերուն կամայականութեան:

— Հայրի՛կ. կը հարցնէ տղան երեսկախ, հայու գպրոց չ'կա՞յ հոս:

— Ո՛չ, զաւակս, հայոց գպրոցը գծովք է, Աստուած չ'ընէ որ հոն գնեմ (և այս սե մուրը կը բսէ հայ գպրոցի ճակատին, ինք որ գպրոցի սեմէն ներս ուրքը գրած չէ, և որ իր կեանքը կ'անցընէ խաղամունքներու հետ:

Հայրերու այս լեզուն մեծ ազդեցութիւն ունի միշտ զաւակներուն վրայ:

Տղան յուսահատած՝ բերնէն կը թուցնէ անգլիական վարժարանի մը անունը, հետեւալ օրը կ'երթան: Գպրոցին տնօրէնը, ժպիտը շրթունքին, կ'ընդունի զանոնք իր գրասենեակը, ուր մատենագարաններ, քարտէսներ, հեռաձայն, և շատ մը գիտական հաւաքածոյք, նոր ու փայլուն, կը զօշոտեն ապուշ հօրը աչքերը, որոնք վարժուած են միայն արասքուստ դատելու. կարճ տեսակցութենէ մը վերջ, հայրը կը բանայ քսակին բերանը, կը վճարէ կանխիկ եւամսեան, տղան կը թողու հոն ու կը մեկնի: Խեղճ տղան, անբան անասունի մը պէս կը նետուի դասարանին մէկ անկիւնը, վեհերոտ նայուածքներ կ'ուզէ երբեմն շուրջը. մէկը չ'կայ իր լեզուէն հասկցող. բայց որի՛ հոգ. անգլիէրէն խօսիլ պիտի սորվի. հայերէն գիտնալէն ինչ օգուտ: կանցնին օրեր, շաբաթներ, ամիսներ. կը վճարուին քանի մը եւոամսեաններ, իսկ տղան կը զգայ վերջապէս իր կացութեան դառնութիւնը ու կը խորհի բացուիլ իր մօրը, սրով հետեւ հայրը չ'ընդունիր որ և իցէ

զանգամ այն դպրոցին դէմ, որ պէյերու քաշաներու զաւակներ կը յաճախեն. անյարձակելի է այն: Մայրը կը խղճայ սողուն վրայ, կը հասկըցնէ եղելութիւնը, բայց ի զուր. հայրը վճռած է հոն դրկել ազան. հոգ չէ թէ հոն խամրի անոր մատաղ միտքն ու հոն մեռնին անոր տոհմային ավնուազոյն զգացումները. մինչև իսկ կը սպառնայ դպրոցէն հանել զայն ու աշկերտ դնել արհեստաւորի մը քով, եթէ ազան պնդէ իր զգոհութեան վրայ . . . :

Անցեալներն երբ հարցուցի իմ ճանչցած ծնողներէս մէկ քանիին թէ ինչո՞ւ իրենց զաւակները ազգ. դպրոցը չ'են ուղարկեր, այլ կը յանձնեն օտարներու զիրկը, անոնցմէ մին՝ սա կարճ պատասխանը տուաւ. «Օտարութիւնն օտարութեանն էր քան ի սեպի սեպի կը աւիրուի»: Պատասխանին վրայ անելի խորհիլ սկսայ, երբ լսեցի պատմածները մէկ բարեկամիս որ ներկայ գտնուած էր նոյն վարժարանի այս տարուան հարցաքննութեանց, որոց մէջ աշակերտ և աշակերտուհի, ուսման բոլոր առարկայից մէջ ալ — նորանշա՞ն երևոյթ — հաւասար յաջողութիւնն ցոյց տուած են: Պուկկարիայէն նոր եկած հայրենակից մը հետեւալ կ'ծու բայց իրաւացի դիտողութիւնները կ'ընէր վերջերս, Գահիրէի հայութեան, իր վարժարանին և երիտասարդութեան մասին. «Այստեղի հայութիւնը կ'ըսէր, օտարամոլութիւն կը հոտի. դպրոցն ուրկէ պէտք է դուրս գան հայրենապէր ու զարգացած երիտասարդներ, զարձած է լեզուներու բարեւոն մը, աշակերտները թութակի պէս բերանացի կը սորվին այն բաները միայն որոնք պէտք են իբրև կապիկ ընկերութեան մէջ ապրելու համար»:

Որին է յանցանքը. ուսուցիչներուն, — ո՛չ. աշակերտներուն. — ո՛չ. Հոգաբարձութիւնը (մէկ անգամէ բազկանցած), ո՛չ, սխալեցայ, հոգաբարձուն կամ տեսուչը, կրթական խորհրդա-

կանը, ի՞նչ կ'ուզես ըսէ՛, անուանի դատաւոր մ'է. անոր ըզեղին մէջ տեղական բարքերն այնքան տեղ բունած են որ հայ լեզուն, կրօնքն ու պատմութիւնը դուրս մնացած են, և այս հանգամանքներով է որ երկու տարիէ ի վեր կը վարէ վարժարանի զեկը՝ Ո՛վ դարք, ո՛վ բարք . . .

ԳՊՐՈՅԱԿՍՆ ՄԸ

### ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

(Շար. Ասիտոյ ք/սերէն)

Յուրաք կը փչէր, երկինքը սառած ապակի մ'էր կարծես, գետինը համատարած ձիւնը կը ծածկէր. ամեն մարդ իր անտէր քաշուած էր, վառարանն աւելի կը սիրուէր, մանաւանդ Ծննդեան ճրագալուցի իրիկունը. հայրս պատարագիչ ըլլալով՝ եկեղեցին պիտի պառկէր. մենք ու մենք մինակ շարուած նստած էինք քուշին շուրջը. մութը կոխած էր, դուրսը ոտնաձայն մը լսուեցաւ, կէս մը բացին տանը դուռը. մանկական հագագներէ յայտած արժաթի ձայներ հնչեցին. «Աւետի՛ս, աւետի՛ս», Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, աւետի՛ս» և ուրիշ տաղեր: Երգը գագարեց, երէց եղբայրս դուրս ելաւ, երգեցիկ մանկերամը բարևեց ու սովորական նուէրներով մեծարեց: Այդ իրիկուան երգերն ու երգեցիկներն անջինջ մնացին մտքիս մէջ: Հետաքրքիր, դարձեալ սկսայ շարչարել մայրս հարցումներով, որոնց ո՛չ այնչափ գոհացուցիչ պատասխաններ տուաւ. մօրս տողսուկն ու դժուար կացութիւնն զգալով՝ երէց եղբայրս առաւ խօսքն և սկսաւ բացատրել թէ՛ ի՞նչ կը նշանակէր այդ մանուկներուն երգը. պատմեց Քրիստոսի ծնունդը մաւրի մը մէջ, հովիտներուն զիշերային հանգեանները, հրեշտակներուն ելուէջները, մողերուն երկրպագութիւնն ու նուիրաբերութիւնը, և այլն: Ապուշ ապուշ մտիկ կ'ընէի, ի զուր

կը փորձէի բան մը հասկնալ այնքան վերայասիան չըսենք հակաբնական եղբրութեանց մէջէն: Հեռաէն կը լսէի տակաւին երգեցիկները որ ուրիշ տուներ կը պարտէին հնչեցնելու համար միեւնոյն եզանակը: Յնձութիւնն ընդհանուր էր տանը մէջ, բայց դէմքերն ալ կը ծիծաղէին, կանուխ պէտք էր պառկիլ ու կանուխ արթննալ՝ արշալուսին՝ եկեղեցին գտնուելու համար: Վառարանին կրակն անթեղեցին, ամեն ոք անկողին մտաւ:

Ագաղազի ձայնին հետ սկսան զօզանջել երկաթէ ու փայտէ կրկին կոչնակները. այդ էր արդէն. արթննացանք ամենքս ալ, սունը բոլոր շարժման մէջ էր. եկեղեցւոյն ողին բռնեցինք մեծ ու պզտիկ, սառած փողոցներէն անցնելով ու դիշերուան կծու ցուրտը ծաղրելով. եկեղեցւոյն դաւիթն ասեղ ձգելու տեղ չէր մնացեր. հաւատացեալ բազմութիւնը խռնած էր հոն: Գպիրներու ու քահանաներու յատկացած դռնէն տարին դիտաւր մտայ, հօրս քով կեցայ: Շարժ դիտեցի, լուսավառութեանց մէջ ընկողւած էր հոյակապ եկեղեցին, Ս. Յակովբայ Մճրնայ Հայրապետին անուան ձօնուած: Գահանայ ու դպիր միաձայն երաժշտութիւն մը կը ծամէին, ծաղկանկար ու ոսկեճամուկ շապիկներ հագած մանուկներու գլխիկները՝ լայտերուն մէջ թաղուած՝ հանդիսին սգևորութիւնը կը շեշտէին: Եկեղեցւոյն աստղաձև լուսամուտներէն ներս կը սոսկալէր առաւօտեան առաջին լոյսը, մինչդեռ մենք, ժողովրդին մէջէն թափուր կը դառնայինք. «Քրիստոս ծնաւ, աւետիս»ը հնչեցընելով:

Ժամերգութիւնն աւարտած՝ չեմ յիշեր թաղեցիներէն որուն սունը գացինք. մասնաջ ըրած էին: Սրահին մէջ ընդարձակ սեղան մը փռեցին, որուն բոլորտեքը նստանք, 30է աւելի կոչնականներ. Ս. Ծննդեան առթիւ կազմուած էր խնջոյքը: Ծաշէն առաջ Զէյթունի այգիներուն ընտիր բերքէն

հանուած օղին 3 անգամ խմեցին բոլոր բաղմականները. այնուհետև սպասն սկսաւ: Մատողին արգանակը, բրինձ ապուր և ձուազեղ, նաև սոսկրակի թանձրացած ու զտուած մածուն և կարագ ու մեղր, ահա՛ այն օրուան պաշտօնական կերակուրները:

Տունն երբ որ դարձանք, ողջագուրումներն սկսան իրարու. մայրս այն օրն աւելի հաճոյ և սիրուն կերէէր ինձ. ամեն կողմէն ժպտոններ ու համբոյցներ: Օտարական մ'ալ տեսայ սունը. գիւղորէից մէկուն բնակիչն էր որ ինդակցութեան համար եկած էր, հետը բերելով վայելուչ ընծայմածուն, կարագ, մեղր. ինք ցնցատիներու մէջ, բայց բերածները մաքուր էին ու ճախ. ի վերջոյ հասկցայ թէ՛ դիւզացիք սովոր էին այցելութիւն տալ ամեն տարի, հինգ նաւակատեայ տօներուն տոթիւ: Այդ շնորհն ու մեծարանքը՝ հօրս երիցական հանգամանքին պէտք էր վերագրել. ուստի անմեղ ու միամիտ հրճուանք մը կը զգայի քանի՛ խորհէի քահանայի սրգի լրջալուս վրայ:

Մական մուցայ հոս յիշելու թէ՛ Ս. Ծննդեան տօնէն վեց օր առաջ, Ամանոյին, ուրիշ ոչազբաւ տեսարանի մը ներկայ գտնուած էի. տեսարանն որ ամեն տարի կը կրկնուէր մեր տան մէջ:

Գիշերը կանուխ ելած էր մայրս, քոյրերուս աջակցութեամբ երկու ահազին կաթսաներ դրած էր եռստանիներուն վրայ, երկու վառարաններուն մէջ. կաթսաներուն մէկուն մէջ կ'եռար ռապնաթսնը միւսին մէջ ցակարպուրը:

Առտուն երբ որ արթնցայ, շատ մը ծանօթ ու անծանօթ դէմքեր տեսայ շարժուող դրացի, թաղեցի, բարեկամ, մօտաւոր ու հեռաւոր ազգականներ, կիներ ու ազլիկներ, անթերուն տակը ծրարներով եկած էին այցելութեան. ոմանք երեսներու կը շոյէին ու կը զգուէին, ուրիշներ միզէր ու նուէրներ կը թափէին գողս — սրովհետև

Ջէյթունի մէջ տափօտ չ'են հազնիր—  
խնդութեանս զենիթն էի:

Ոսպնաթանն ու տակապօրը (երկ-  
րորդը գետախնձորի պէս մանրուած  
ճակնդեղի և լուբիայի խաշածն է)  
պատրաստ, կոշնականները միայն գե-  
ղեցիկ սեռէն էին: Սեզանին վրայ  
հոս ու հոն կ'երեւէին ուրիշ պահպ  
կերակուրներ ալ, զորս հիւրերը բե-  
րած էին ըստ սովորութեան, բրնձա-  
պուր, սիսեռի ծեծուած, հացիկներ  
(ձէթի մէջ տապկուած բազարջ) ևն.  
կամայուկ մը մտեցայ մօրս, պատ-  
ճառն իմանալ ու զեցի այս արատաստը  
արարողութեան. «Այսօր կ'ապանդ է,  
նոր շնորհաւոր տարի» ըսաւ Շնորհիկ  
քոյրս ամենէն աւելի զուարթ էր.  
իր անուան տարեգարձի տօնախմբու-  
թիւնը կը կատարուէր: Մօրս բազմա-  
զբաղ կայութենէն օգտուելով՝ այցե-  
լու կիներուն հետ եկած իմ համասի  
մանուկները համոզեցի, բոլորն ալ տարի  
դրացի տան մ'ամայի սրահը. սկսանք  
հոն դրօսնուլ. խաղին ջերմութենէն  
չ'էինք զգար կծու կծու փչող քամին  
որ մըլեգին կը մւլտար, ու հեռակայ  
լեռներուն ձիւները մըլեղի պէս կը  
ցտնէր օդին մէջ. արևը պայծառ,  
բայց հիւանդոտ ճառագայթներ կը  
սփռէր անկենդան գետնին վրայ, բու-  
լր օրն անցուցինք հեշտանքի և հրքճ-  
ուանքի մէջ:

Ահա՛ այդ անոյշ ու անձկայի անց-  
եալի թավիչ յիշատակն էր որ ներշնչ-  
չից սգելու հետեւեալ բանաստեղծու-  
թիւնն, երբ բանտիս ծաղրածու խոր-  
չին մէջ՝ սգաւոր Ս. Մնունդ մը կը  
կատարէի:

Ս. ՄՆՈՒՆԴ

Տըղայ մ'էի եօթը տարու, չար էի.  
Ընկերաց հետ կը խաղայի, պարէի  
ճուրտը փըչէր. տնէ ի տուն թռչէիք,  
«Քրիստոս ծընաւ, ուրախացիր ո՛վ երկինք,  
Եւ դո՛ւ, Երկիր» մենք երգելով  
Դռնէ ի դուռ գայիմք հոլով:

Ա՛խ, ի՞նչ անոյշ օրեր էին այն օրեր,  
Մտտաղ հասակս երազներով կ'օրօրէր.

Ընկերաց հետ ուրախ զըւարթ ի դարձիս՝  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»,  
Կ'երգէիք մեր դըրամ ի սեմ,  
Կը շողար մօրս դէմքը մըսեմ:

Կոչնակները կըլին մեր սուրբ տաճարին,  
չաւատոցեալ ծառաները կ'անչէին.  
Ս. Շմունդը տօնել, ըզմեզ մամկըտիս,  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»,  
Երգել տալով կը դարձնէին  
Շուրջը Դասին և Ատենին:

Դեռ կը յիշեմ, տունը կանուխ դառնայիմք,  
Քահանայ մը — ալևոր հայրս էր նոյն ինք.  
Կ'ուսուցանէր ինձ ի բերան, կըթէր զիս.  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»,  
Յեղյեղելով յաճախակի  
Կ'երգէի մէջն իմ գիւղակի:

Ո՛հ, ի՞նչ անոյշ, ի՞նչ գեղեցիկ էր այն օր,  
Կը նետուէի զըկերուս մէջ հօր ու մօր.  
Երջանիկ էր հոգիս, գարունն էր սրտիս,  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»  
Նըւագելով զըւարթագին  
Կ'արբենար իմ անրիժ հոգին:

Շատ շուտ անցան, շողի՛ր պէս մարեցան  
Այն սուրբ օրեր. իմ ծիրանի ծիածան  
Տառապանքի մէջ ցեղեցաւ, եղո՛ւկ զիս,  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»  
Ա՛լ կարելի չէ ինձ երգել,  
Երգելու դէմ կայ բուռն արգել:

Տարիներուն հետ թըռան պար ու ծիծաղ,  
Կարմիր գիծին դարձաւ լեղի մեզ քացախ.  
Ձըւարճանալ՝ արգիլուած է հէք հօտիս,  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»  
Երգողն ուղիղ բանտ կը տանին  
Թէ՛ ծերունին թէ՛ պատանին:

Քու կարօտով, հասա՛կ ոսկի մանկութեան  
Պիտի հալիմ ու հառաչեմ յաւիտեան.  
Հեռալուր ծայն մ'է կը հնչէ ականջիս,  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»  
Ա՛խ, այդ ծայնին մէջ կը լսեմ  
Հի՛ն օրերուս հրաժեշտ վըսեմ:

Դարձեալ եկաւ տարեդարձ Ս. Շմունդեան,  
Դուրսն ա՛մենքն ալ յանձնըւած են ցնծու-  
թեան.  
Իսկ հոս, պէս պէս դէմքերուն մէջը բան-  
տիս՝

«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետիս»  
Կարելի՞ է անլաց երգել  
Եթէ չ'ըլլայ հոյն իսկ արգել:

իմչպէս եկար այնպէս գրծա՛, Ս. Ծնունդ,  
ի գուր մի՛ սիրտը թշուառիս համեր թուռը.  
Սուրբ յիշատակ, մի՛սողոսկիր խոր սրտիս,  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետի՛ս»  
Այն ազգերուն մանկտիս կ'երգէ,  
Որոնց սիրտը գերծ է վերթէ:

Իսկ դու, լքեա՛լ, դատապարտեալ, դո՛ւ  
լըռէ՛,  
Քեզ համար քաց անդունդ մը կայ որ խոր է.  
Եզրը կեցած, սեւեռաբիր, ի՞նչ խորհիս,  
«Քրիստոս ծընաւ և յայտնեցաւ, աւետի՛ս»  
Չ'ես լըսեր հոռ, թէ ոչ միայն  
Եղերակոծ երգերսւ ծայն:

Ուրեմն երթա՛ք բարեաւ թափոր ու կոչմակ,  
Խաղ, երգ, զիւղակ, տաճար, ամցեալ, յի-  
շատակ.  
Վերաւորիս խոցը սըրտիմ ո՛չ բուժի,  
Քրիստոս մեռաւ, անյայտացաւ, քո՛թ գուժի.  
Շիջաւ արևն արդարութեան,  
Օթևամս է մըթիմ զուրամ:  
24/9/93 ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ

## ՔՄԱԾԻՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

### ԲՈՍՄԵՆ

Հազուագիտ տիպար մըն է իռմէն՝  
իրբ գերազանցօրէն գործի մարդ և  
գերազանցապէս սրաի տէր մարդ  
— ահա՛ երկու բառով իռմէնի ուր-  
ուագիծը:

Խոնարհ այլ ազնիւ ծագումէ մը՝  
իռմէն սրինակելի ինքնօգնութեամբ  
ու բազմին էն դժնդակ ձախողուած-  
ներուն դէմ կուրծք տալով՝ յաջողած  
է գրաւելու ընկերական այնպիսի  
դերք մը ուր հասնելու կը տենչան  
իրմէ ստորինները, իսկ իրմէ բարձ-  
րերը նախանձաբեկ կ'այրին ու կը  
վախնան որ մի՛ գուցէ օր մը մինչև  
իրենց անմատոյց բարձունքներուն  
մօտենայ այն: Սակայն իռմէն, որ  
բաջ զիտէ թէ ինչ աղբւրքէ կը բխի  
առաջիններու տենչը և ինչ կ'արժէ  
վերջիններու նախանձը, սառն ան-  
տարբերութեամբ կը կոխէ կ'անցնի  
իր գործին ու իր անձին շուրջը խլըր-  
տող նախանձոտ գալարումներու վը-

րայէն և անյողողող ու յուսալից՝ կը  
գիմէ իր կէտ նպատակին, այն է հաս-  
նիլ աւելի բարձր, աւելի անկախ  
գիւրքի մը:

Իր միտքը վայրկեան մը չի շեղիր  
այդ սեւեռուն գաղափարէն ու օրն ի  
բուն հոն իր վաճառատան մէջ, ա-  
մառուան տաքին ու ձմեռուան ցուր-  
տին, առաու կանուխ մինչև իրիկուն  
ուչ առեն՝ միշտ իր գործին գլուխն  
է, հրամաններ տալով, հրահանգներ  
հաղորդելով իր պաշտօնեաններուն և  
յաճախորդները համոզելով. իր տեա-  
րակներուն վրայ կը քած՝ կը գրէ, կը  
հաշուէ, կը փորձէ, կը քննէ, կը կշռէ,  
կը չափէ ու գիշերն ամբողջ կ'երազէ  
ցերեկուան հաշիւներուն վրայ. երբ  
տեսնէք զինք որ ճամբան կ'երթայ  
խոհուն ու մտազբազ, ապահով եղիք  
որ անպատճառ ձեռատետարէն օրհաշիւ  
և ասկից մայր հաշիւ անցընելու մու-  
ցըած գործողութեան մը վրայ կը  
մտածէ և կամ գործին աւելի մղում՝  
ու ընդարձակութիւն տալու միջոց-  
ները կը խորհի ու կ'որոճայ:

Առետրական հրապարակի վրայ  
իր ունեցած փայլուն յաջողութիւնը  
կը պարտի իռմէն որչափ իր անխոնջ  
ու ժիր գործունէութեան, այնչափ  
և աւելի իր ուղղամիտ ու պարկեշտ  
վաճառականի համբաւին զոր իրա-  
ւամբ ստացած է և որու շնորհիւ ան-  
պայման վստահութիւն և հաւատքի  
պէս բան մը ներշնչած է ամեն անոնց  
որ կը գործեն իրեն հետ:

Իռմէն տարիներ առաջ ազնիւ այլ  
ապերախտ ասպարէզի մը ստորնու-  
թիւնները կը քած՝ անխառն հաճոյք  
մը, հպարտութիւն մը կը զգայ այսօր  
վաճառականական ոչ նուազ պատ-  
ուարեր ու շահաւէտ ասպարէզին մէջ  
ունեցած իր յաջողութիւնը տեսնե-  
լով, թէև իր գործին հոգերը, յաջո-  
ղութեան ու ձախողութեան ելեկշ-  
ները չափէն աւելի գրաւած են իր  
միտքը և շատ քիչ կամ բնաւ ժա-  
մանակ չ'են թողուր իրեն ընկերա-  
կան շրջանակներու մէջ մանելու,

մտերմութիւններ հաստատելու և բարեկամական կամ ընտանեկան զուարճութեանց մասնակից գտնուելու:

Սակայն այն տարիքին՝ ուր կենսաւիր առագութիւն մը եռ ու եփ կուզայ երակներուն մէջ, ուր բոցանտա երեսկայութիւնը սրտի ու մարմնի հաճոյքները ըմբոշխնելու տենչը կը հրահրէ, իոմէն վաղահաս աշխոյթի մը լրջութիւնը ունի և անհրազայր կը գտնէ սիրոյ և բնութեան պարզեւած գեղեցկութիւնները: Ինչսուարդեօք — մի գուցէ անզգայ սիրտ մը գեանգամ ըլլայ Աստուած իոմէնի կուրծքին տակ, կամ ընկերային անիրաւութեանց հանգէպ զգացում պժգանքը ն'ատած ըլլայ զինք ծայրայեղ սկեպտոսութեան մը հեռաւոր սահմանները և կամ չոր ու ցամաք թուամշաններու յաւիտենական խաղերը սառեցուցած ըլլան իր սրտին մէջ մարդկային ամեն աշխի հրայրք: — ոչ, ընդհակառակն իոմէն կը կրէ ոսկի սիրտ մը՝ զթոյ և խանդադատանքի զգացումներով առլի, սիրտ մը կարեկից՝ թշուառութեան ծոցը տուայտող անժառանգներու, կեանքի զժնէ պայքարներէն վաստակաբեկ հոգիներու, ու տեսնուած է շատ անգամ որ զթութեան արցունքներ հոգսած են իր աչերէն խեղճութեան և կարօտութեան տեսարաններու առջև: Իոմէնի տարօրինակ լրջութիւնն ու անտարբերութիւնը վերագրելի են մասամբ իր հանդարտ և ծանրարարոյ նկարագրին և մասամբ իր ձեռնարկած ասպարէզին մէջ յառաջդիմելու սպասիչ մտահոգութեան:

Մայրայեղօրէն յոռետես մըն է իոմէն ամուսնական կեանքի մասին և երբէք չէ կրցած հաւատալ թէ երջանկութիւնը կրնայ գոյութիւն ունենել տարբեր բնաւորութեամբ երկու օտար էակներու անխղճի միութեան մէջ և կը կարծէ թէ օտարի մը մուտքն ու կենակցութիւնը իր ընտանիքին մէջ՝ միանալով բնաւորութեանց անհամաձայնութեան՝ անվը-

րէպ կը խանգարեն իր և իրեններուն անդորրութիւնը և փոխանակ երանութեան՝ զժբաղգութիւն կը բերեն ընտանեկան խաղաղասէր յարկին տակ: Ահա այս պատճառաւ իոմէն՝ որ արդէն թեակոխած է հասունութեան տարիքը, յամառօրէն կը մերժէ Հիմէնեան ամենէն նպաստաւոր առաջարկները և իր սրտի սփոփանքը իր փնտոէ ք կը գտնէ ընտանեկան երջանիկ կենակցութեան մէջ իր հարազատներուն՝ որոնց համար անկեղծ գուրգուրանք մը, անհուն սէր մը ունի իոմէն:

ԳԻՄԱԿ

ՊԱՆԴՈՒԻՏԻ ՍԷՐԸ

( Ծ - Ի Ն )

Հ.Յ.՝ սարեղու կատարիմ տակ յաղթաւանջ,  
Շէկ արևուն ժառագայթներն հրաճաճանջ  
Մինչդեռ ահա կը մարին,  
Բայց իմ սրտիս անդունդին մէջ ահաւոր  
Պահուած սիրոյ վառ կայծերը բիւրաւոր  
կը բորբոքին, կը վառին:

Եւ գիշերուամ մէջ խօլական, խաւարչտիմ  
Գերեզմանի լընտութիւնը հոս, չորս դիմ  
Ողջ աշխարհը կը տիրէ,  
Բայց քընարըս իր թեւերով թրթրուտն,  
Վառուած սըրտիս լարերու հետ դողդոջուտն  
Օ՛, դեռ երգել կը սիրէ:

Օ՛, դեռ երգել կը սիրէ ան սիրայոյց,  
Երգել սէրը կախարդական, նորաբոյս  
Եւ իր հըմայթը արթնու,  
Օ՛, դեռ սիրել կուզէ ան քեզ ջերմաջերմ՝  
Եւ ճաշակել կեանքի վայելքը վրսեմ  
Ու հեշտամբը սիրալիւր:

II

Գիշերն անցաւ, անցաւ ամիս, մէկ տարի,  
Հոգւոյս հատոր ես քեմէ լուր մը չ'առի,  
Միրտըս քեզմով հալեցաւ,  
Մինչև կրկին սիրած վայրերս թուայ, հաւ  
սայ,  
Բայց աւա՛ղ քու սև շերիւմը հոն տեսայ,  
Վըրան զըրած «Մէր ու Ցաւ»:

չոն՝ ստրերու կատարին վրայ յաղթական՝  
Արշալոյսի լոյս շողերը կը շողան,  
Գեմաց արփին կը վառի,  
Բայց իմ ծաղիկ հասակիս մէջ այս մուտղ-  
կոտ,  
Կեանքիս կամթեղն մեկամաղձիկ և աղօտ  
Վա՛ն, կը զգամ, շո՛ւտ կը  
մարի:

ԱՍՊԵՏ

Ռուսնուգ 5 Դեկտ. 98

## ԱՎԻՆԱԼՏՕ

Մարտիրոս ազգ մ'ենք մենք, ու  
թերեւս մեր կրած զարաւոր հալա-  
ծանքներով մարտիրոս ազգերու մէջ  
առաջնակարգ տեղը կը բռնենք: Շատ  
բնական կը գտնեմ՝ այն ցաւակցական  
համակրանքը զոր կը տածենք մեր  
տառապեալ բազմակիցներու հան-  
դէպ, խնդակցելով յաջողութեանը  
այն առանձնաչնորհեալներուն՝ որոնք  
արեան գնով միայն արժանացած են  
իրենց սուրբ իղձերու փառապսակին:

Կրէտէէն, Քուպայէն վերջ Ֆիլիպ-  
եանն է որ այսօր ցոյց կուտայ իր  
վէս գլուխը, յինքն գրաւելով աշ-  
խարհի տենդոս ուշք. լոկ իր հա-  
ւատքին և բազուկին ապաւինած՝  
պայքարը կուզէ շարունակել մարդա-  
սէ՛ր ազատարարին դէմ, մինչև վեր-  
ջին շունչը:

Կ'արժէ որ փոքրիկ ծանօթութիւն  
մ'ունենանք թէ ո՛վ է Ալինալտօ:  
Ֆիլիպեան հերոսախմբի քաջարի  
պետը:

Էմիլիօ Ալինալտօ ծնած է ի Քու-  
վիթ, քսան և ութ տարի առաջ:  
Քաղքին նշանաւոր և հարուստ վա-  
ճառականի մը զաւակ՝ Ալինալտօ  
նախնական կրթութիւնը առած է կղե-  
րտկաններու քով ու վերջէն Մատ-  
րիտ զրկուած է՝ աստուածաբանու-  
թիւն սովորելու, վասն զի ծնողքը իս-  
կուպէս կը փափագէր զանի քահա-  
նայական ասպարէզին մէջ տեսնելու:  
Երկամեայ ուսանողութենէ վերջ՝

աստուածաբանութենէ այլևս յազե-  
ցած՝ փարիզ կ'երթայ բժշկականու-  
թեան հետեւելու համար. բայց, շատ  
չանցած, միտքը կը փոխէ ու կը վե-  
րագառնայ Ֆիլիպին՝ ուր բանակի  
մէջ զօրք կ'արձանագրուի: Հաղիւ  
հարիւրապետի աստիճանին կը հաս-  
նի, թելագրուելով ընկերներէն այն  
գազանի ընկերութիւններուն՝ որոնց  
թեկնածու էր ինք, իր զօրքերը ա-  
պրասամբութեան կը մղէ: Զօրահան-  
դէսի մը մէջ այս վերջիններ իր ա-  
զատաշունչ ճառախօսութիւններէն  
ելեկտրացած, կրակ կ'ընեն իրենց  
հրամայող սպանիացի զօրապետնե-  
րուն վրայ և Ալինալտօի հետ կը  
քաշուին մացառուտ անտառները:

Քիչ ատեն վերջ 5000 հոգի կը  
միանան Ալինալտօի, որ հեազհետէ  
շատ մը յաղթութիւններ կը տանի.  
Թէպէտ ապստամբութիւնը վերջնա-  
կանապէս ջախջախուելով՝ Սպանիա-  
ցիներէն կը հարկազրուի փախուսա  
տալ, մահուանէ պրծելու համար:  
Երբ Սպանիոյ և Միացեալ Նահան-  
գաց միջև պատերազմը կը ծագի,  
Ալինալտօ արդէն այսպիսի առթի մը  
կ'սպասէր՝ կրկին ապստամբութեան  
գլուխն անցնելու, մէկէ աւելի պա-  
րագայից մէջ ցոյց տալով իր կարը-  
ճութիւնը:

Կը հաւատամք «կ'ըսեն թէ»ին:

Կը պատմուի որ, ապստամբութեան  
սկիզբի օրերը, Ֆիլիպեաններու հրա-  
մանատարը հինգ հազար ոսկոյ պար-  
գեւ մը կը խոստանայ այն քաջին՝ որ  
Ալինալտօի գլուխը իրեն բերել յա-  
ջողի. ու օր մը, հրամանատարը նա-  
մակ մը կ'ստանայ, նոյն իսկ Ալի-  
նալտօէ, սոյն պարունակութեամբ:

«Իրամի մեծ պէտք ունիմ, և ես  
անձամբ պիտի գամ՝ գլուխս ձեզ  
յանձնելու:

Շարաթ մը վերջ վանական մը  
կը ներկայանայ հրամանատարին ու-  
պարանքը, պահտորդները կ'ողջունեն  
զայն սովորակսն մեծաբանքի բն-  
րեւով:

«Նորին վսեմութիւնը սուանձինն է» կը հարցնէ սենեկապանի մը որուն հաստատական պատասխանին վրայ արբան հրամանատարին սենեակը կը հրամայուի:

— *Benedicite!* վսեմ Տէր, կ'ըսէ անոր հանդիսաւորապէս «խաչակներով, պեղային կղերականաց սովորութեանը համեմատ:

Այլ յանկարծ արագ շարժումով մը ետին դառնալով դուռը ամուր մը կը փակէ, բանալին փականքէն կը հանէ:

Վեր կը ցտակէ հրամանատարը՝ տաշած, այսպիսի այցելութեան մը այլանդակ ձեւէն:

Կեղծ արբան, այն ատեն, կը մերկանայ իր վեղարը և, կոնակի վերարկուն և դիմակազերծ, դէմ առ դէմ հրամանատարին, սպառնական զիրք մը բռնած, դաշոյնը ձեռքին մէջ ճօճելով:

— վսեմ. Տէր, ահա ձեզ կը բերեմ Ակինալոսի գլուխը, կ'ըսէ անոր հեղինելով, առէք զայն եթէ կուզէք, միայն . . . միայն թէ՛ այս թանկագին աւարին համար ձեզմէ կը պահանջեմ խոտապցում վարձատրութիւնը:

Իր ուսին վրայ կախուած դամակլէսի սուրէն ահաբեկած, թէ ուրիշ որպիսի կանխակալ մտածումով հրամանատարը կը փազաքչէ յանդուգն ապստամբը, որ իր կարծութեան շնորհիւ կ'ընդունի հինգ հազար ոսկին, ու կրկին իր դիմակը գրած՝ կը վերադառնայ, առանց պահպաններէն շարչրկուելու:

Ուրիշ անգամ մ'ալ՝ դաւադրութեամբ կ'ուզուի սպաննել սալ զինք երեկոյթի մը մէջ, որուն ինք ալ ներկայ ըլլալու էր: Ակինալոս կը հասկնայ բանը, կը ճանչնայ իր թըշնամին որ երեկոյթի նախընթաց գիշերը՝ մեռած կը գտնուի, դաշոյն մը սրտին մխուած ու կպած. կոթին (*manche*) վրայ այսպէս գրուած էր, Ակինալոսի ձեռքով:

*Que ceci serve d'avis aux assassins!*

Կը կարծէք թերևս որ այս դերերը խաղալու վարժ հերոս մը հերակլեան կերպարան մը ունեցած ըլլայ. ոչ, Ակինալոս ընդհակառակը, կարծահասակ է և նրբակազմ. զեղնած դէմքով, պզտիկ սև աչերով՝ ազեղնաձև յօնքերու տակ . . . ճարճոցիի նման մարդ մ'է՛ թխահեր, կարծաբոյս աննշմարելի պեխերով:

Ահա Ֆիզիքական կազմը այն անվեհեր մարդուն որ՝ այս պահուս այնքան խօսեցնել կուտայ իր վրայ, բուռ մ'անկանոն զօրքերով շունչ առնել իսկ չ'տար սպարապետ Օթիսի գերազանցապէս կազմակերպուած բանակին:

Այն պահուն որ այս տղերքը կը շարուին, վերջերս հասած հեռագրով մը Ակինալոսի մահուան բօթը կը տարածայնուի: Հեռագիրը կ'ըսէ թէ՛ կը կարծուի որ Ակինալոս անձնապան եղած ըլլայ, ուրիշներ ալ կ'ենթադրին թէ՛ սպաննուած ըլլայ: Այս լուրը կ'ընդունինք մենք վերապահումով:

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Աղեխանքիւ, 26 Յունիս 1899

Բարեկամ, քսան անգամ գրելը ձեռքս առի և քսան անգամ վար գրի, շուարած անճրկած մնալով թէ ինչ ըսեմ ինչ գրեմ քեզ որ ի լրումն շարեաց՝ երթալով աւելի պահանջկոտ կը դառնաս քանի կը շեշտուի կարևոր լուրերու ճշմարիտ սովը. մինչդեռ անդին բնագաւառի մէջ հացի սովը կը շարունակէ իր աւերները և քաղցած ստամբաներու յետին համբերութիւնը կը սպառէ:

Մտուգիւ, ինչ կարևորութիւն ունի բեզ ու քեզ հետ Փիլիսիի ընթերցողներուն համար, եթէ գրեմ որ մեր թաղականները իրենց թոյլ ու կարկրտուն առագաստները մեղմաշունչ

հովին զէ՛մ պարզամ՝ սաղապաճեմ  
 գնացքով մը կը վարեն մեր նաւը որ  
 պահ մը կարծուեցաւ թէ՛ պիտի սու-  
 րար շոգեպինդ, իրենց ետեւէն քաշե-  
 լով ասանելով ազգային գործերը մի-  
 եւնոյն յամբարայլ ու դանդաղ ըն-  
 թացքով. թերևս բուսական միամիտ  
 են անոնք հաւատալու թէ՛ ծանր քա-  
 լողը շուտ կը հասնի, հոգ չէ թէ  
 Օւէլիէն Եօլ տարբեր կարծիք ու,  
 նենայ այդ մասին. իսկ ես բնաւ չեմ՝  
 զարմանար այս դանդաղութեան վրայ  
 երբ կը մտածեմ որ ո՛չ թէ այս կամ՝  
 այն անհատին, այս կամ՝ այն կլիմա-  
 յին ու միջավայրին յատուկ՝ այլ  
 իսկապէս մեր ցեղային բնորոշ թե-  
 րութիւններէն մին եղած է այն՝ շա՛տ  
 հին օրերէ ի վեր, և ասոր հանդ-  
 ուելու համար պէտք չկայ վկայու-  
 թեան կանչելու մեր հին ու նոր  
 պատմութիւնները, քանի որ մեր բո-  
 րը հանրային գործերը, կրթական,  
 եկեղեցական, ընկերային ու բնա-  
 նական, յասակօրէն կը պատկերաց-  
 նեն մեր նկարագրի դանդաղութիւնը:  
 Բայց արդար ըլլալու համար ըսեմ  
 նաև թէ՛ երբ խնդիր ըլլայ կուսակ-  
 ցական սրայքարներ մղելու, փոխա-  
 դարձ ատելութեան կիրքեր արծար-  
 ծելու, զիրար բամբասելու ու կոր-  
 ծանելու, այն ատեն փոթորիկն ու  
 կայծակը մեր ետին կը թողունք ար-  
 քազութեան ու փութկոտութեան մա-  
 սին. ասոր ապացոյցն ալ քեզ կը  
 թողում որ ուզած անզոգ փնտռես ու  
 գտնես . . . :

Ինչ շահեկանութիւն կրնայ ունե-  
 նալ քեզ համար երբ գրեմ թէ՛ մեր  
 թաղականութիւնը այս օրերս կատար-  
 րեց այն սխրովի գործերէն մին, որ  
 իր անունը և յիշատակը պիտի ան-  
 մահացնէ. այսինքն միաձայնութեամբ  
 պարտաւանաց քուէ տուաւ իր մէկ  
 բանիբուն և ուզածիտ անդամին որ  
 յանդգնած էր մեր Միթիկին մաս-  
 նակից ըլլալու անբաւելի մեղքը գոր-  
 ծել: Աւելի վիհօղի, աւելի անմոռաց  
 գործ մը ըլլած չէին ըլլար արդեօք

մեր պատուարժան թաղականները  
 եթէ փոխանակ իրենց մէկ ընկերը  
 պարտաւանաց քուէով դատապարտե-  
 լու, ինչ որ կրնար անշուշտ անցնիլ  
 և անշուք թողուլ իրենց անունը ուզ-  
 գակի Սուլթանին և Համաժողովոյ  
 նախագահին մէյմէկ համիմատ ու-  
 ղերճներ հեռագրէին՝ յայտնելով ի-  
 րենց հաւատարմական զգացումները,  
 իրենց համարին եզրայրներուն վա-  
 յելած շնորհներն ու խաղաղութեան  
 համառարած տիրապետութիւնը Հա-  
 յատանի մէջ: Ու տակաւին ըսել  
 թէ՛ մեր թաղականութիւնը բանդադ  
 կը շարժի. . . : Մինչև աստիճան մը  
 կ'ըմբռնեմ տաճկահայոց ազգ. պաշ-  
 տօնական մարմիններու չէզոք ու  
 զգուշաւոր ընթացքը նմանօրինակ  
 պարագաներու մէջ, և արդէն ուրիշ  
 կ'ըրպ ալ կարելի չէ շարժիլ: Բայց  
 այսպիսի երկրի մը մէջ ուր արդար  
 օրէնքներ կը տիրեն, ուր խօսքի ու  
 մամուլի ազատութիւնը կը յարգուի  
 չափաւորութեան սահմանի մէջ, ուր՝  
 վերջապէս՝ կեանքի, պատուոյ և  
 ստացուածքի ապահովութիւնը կը  
 վայելինք լիւրջի, պորսուալի ու մի-  
 եւնոյն ժամանակ ցաւալի չէ՞ս գրա-  
 ներ մեր վարչական մարմիններուն՝  
 թո՛ղ անզոգայ անտարբերութիւնն ու  
 անիմատ զգուշաւորութիւնը՝ խա-  
 փանարար ու արգելիչ ձեւնարկները,  
 խեղդելու ջախջախելու համար ժո-  
 զովրդային ամեն օրինաւոր շարժում,  
 ամեն անկախ կարծիք ու ազատ ձեռ-  
 բում՝ որոնք պատեհ առիթներու  
 մէջ գործնականապէս կ'արտայայտը-  
 ւին ազգային դատին յաջողութեան  
 համար կատարուած ընդհանուր շար-  
 ժումին մասնակցելու, հարստահար-  
 ւած հայութեան տառապանքը մասամբ  
 մեղմացընելու գովելի փափաքով: Այն  
 պահուն սրարև նոեան քաղաքակրթու-  
 թիւնը սպանիչ գործիքներու ջնջման  
 վրայ կը խորհի և ընդհանուր խա-  
 զաղութեան մօտաւրտ դորամուտի  
 մը արշալոյսը կը տարփողէ խանդա-  
 վառ, ահուելի հեգնութիւն մը չէ՛

կոտորածներու եւ աւերածութիւններու ընդհատուած արիւնտա տուածին վերակտուած Հայաստանի մէջ եւ եղերելի անտարբերութիւնը արատասհմանի կարգ մը վարչական մարմիններու որոնք սարկութիւնը եւ տառապանքը հայու ճակատագրական բուժինը կը համարին:

Ինչ կարեւորութիւն ունի քեզ համար եթէ յայտնեմ որ մեր Միթինկին պատուարժան նախագահը ծանր տեսակէն հազած է Փիւնիկի գէ՛՛ որ իր վերջընթեր թիւին մէջ շատ անփառունակ կերպով ներկայած էր զինք իր ընթերցողներուն՝ իբր համեստ եւ պատուաւոր յանձնակատար, հակառակ օտար թերթերու մեծազորոգ ու շողշողուն սողերուն՝ որոնք սակայն հեգնութեան մօտեցող էօ՛ւ մ'ունէին: Եթէ նիրուի ինձ այս խնդրոյն միջանոյն, պիտի փափաքէի հասկնալ թէ յարգելի նախագահը իբր ինչ կ'ուզէր ներկայացուիլ հասարակութեան՝ իր արժանապատուութիւնը վիրաւորուած չզգալու համար. չէ՛ որ ճշմարտութիւնը կը վերջանայ հոն ուր կեղծիքը կը սկսի, եւ ինչ որ կեղծիք է՝ վիրաւորիչ է արժանապատուութեան. արդ, երբէն ի վեր արդեօք ճշմարտութեան գէ՛՛ յաղթանակ տարած է կեղծիքը՝ սրտին մէջ Պ. Նախագահին զոր միշտ ճշմարտութեան սիրող մը ճանչցած եմ:

Ինչ նշանակութիւն կրնայ ունենալ քեզ համար, եթէ հաղորդեմ որ Փիւնիկի նախորդ համարով հրատարակուած այն լուրը, իբր թէ թագուոր փաշաթուկորեան 15000 ոսկիի կտակ մը ըրած է ազգային կրթական հաստատութիւն մը հիմնելու համար. հոս տարբեր գոյնի տակ կը ներկայացուի եւ տարբեր մեկնութիւն կը տրուի անոր. այսինքն կ'ըսեն թէ՛ ժամանակին հանգուցեալ փաշան, որ տարիներով վարեց Աղեքսանդրիոյ ազգային գործերը երկաթի կամքով մը ինքնիշխան ու միահեծան, որեւէ կերպով յաջողած է այն ատենի թա-

ղականներուն ստորագրել տալ թուղթ մը որ կը հաստատէ ազգապատկան այս ինչ կալուածը 16000 ոսկի արժողութեամբ... փաշայի սեփականութիւնն է, ու օր մըն ալ այդ թուղթը կամացուկ մը կը սպրդի փաշայի անձնական կալուածներու ցանկին մէջ: Ահա՛, որչափ կրցայ ստուգել, այս խնդիրն է որ այժմ՝ կը յուզուի ազգային շրջանակի մէջ եւ ջանքեր կ'ըլլուին ազգին վերագարձելու յիշեալ կալուածը կամ՝ արժէքը. նոյն իսկ ընդունելով որ թագուոր փաշայի կողմէ կտակուած համարուի այն: Սակայն իրաւախոհութեան այս եղանակին համակարծիք չե՛՛ ես. կալուածը կամ՝ ազգին կը պատկանի կամ՝ ոչ. եթէ վաւերական փաստեր կան ազգին պատկանելը հաստատող՝ պէտք է օրինական միջոցներով ազգին վերագարձելու աշխատիլ յիշեալ կալուածը կամ՝ գումարը՝ իբր իր արդար իրաւունքը եւ ոչ թէ իբր կտակ, եւ արդէն չե՛՛ կարծեք որ հանգուցեալ փաշային ժառանգորդները զիջանին կեղծ կամ՝ անգոյ կտակով մը անոր յիշատակը փառաւորելու ջանադիր լիլ:

Վերջապէս ինչ ատիճան կարեւորութիւն քեզ համար եթէ յայտնեմ որ հօր մը մեր պլսիյներուն վրայ գրածը կարդալով տեսակ մը հպարտութիւն զգացի եւ մխիթարուցայ որ գեռ ունինք եղեր բաներ որոնց կարօտը կը քաշեն ուրիշները, մանաւանդ մեր մանկապարտէզը որ առանց չափազանցութեան ճշմարիտ բարիք մ'եղած է մեր պզտիկներուն համար եւ պարծանք՝ զայն հիմնարկող եւ տեսականութեան սատարող մեծերուն: Միայն երկու խօսք կրթասէր Հօր. բնաւ յոյս մի՛ գներ, բարեկամ, ո՛չ ազգային իշխանութեանց եւ ո՛չ ծնողներուն վրայ՝ մանկապարտէզով մը օժտելու համար Քահիրէն. անհասարկան յանդուզն նախաձեռնութիւն մը կամ բարերարի մը ինքնարբեր առատաձեռնութիւնը կրնան ի գլուխ հա-

նել իսկական մանկապարտէզ մը։  
 Սակայն եթէ կայ լուր մը՝ որ քիչ շատ կրնայ հետաքրքրել քեզ և ընթերցողներդ, այն ջանքերն են որ կը կատարուին։ Հոս վերստին հրատարակելու համար դադարեալ Փարոսը նոյն կամ տարբեր անունով լսածիս համեմատ համակրելի իրմբագիրը, որ իբր պրագէտ ու հրապարակագիր՝ շատ ազնիւ չգոնուեցաւ Փիլոսոփիոյ մասին, կ'աշխատի բաժնետէրերու վարչութեան մը յանձնել հրատարակելի թերթը. միակ դժուարութիւնն է սակայն ճարտար այդ բաժնետէրերը՝ պէտք եղած վտահոլութիւնը և ապահովութիւնը ներշնչելով անոնց ձեռնարկողին բարոյականին, ձեռնարկին յաջողութեան և յարատևութեան նկատմամբ. վերջին լուր որ Գահիրէէն կուգայ, յառաջիկայ Յուլիսին թէ Օգոստոսին նոր թերթ մըն ալ հրապարակ պիտի ելնէ եղբր հոգ՝ ընկերութեան մը նախաձեռնութեամբ. Սոսիոյ է այս տարածայնութիւն՝ թէ ո՛չ խաղ մը խաղալ կ'ուզուի Փարոսի վերստին հրատարակման համար աշխատողներուն սիրտը վախ ձգելու կամ անոր խմբագիրը բարկութենէ ճաթեցնելու համար։ Գրէ՛ ինձ այս մասին։

Միբիկ

Ա.ԶԳ. ՔՐՕՆԻԿ

Քաղաքիս Ալգ. երկսեռ վարժարանի ամալերջի հարցաքննութիւնները սկսան նախընթաց ամսոյ 19ին և տևեցին մինչև 23: Քննութեանց արդիւնքն, ինչպէս կ'երևէր, բաւական գոհացուցիչ էր, ինչ որ կը ցուցնէին աշակերտաց մանաւանդ աշակերտուհեաց պատրաստականութիւնները։ Միակ ցաւալի բանը որ մեր աչքին զարկաւ՝ բացակայութիւնն էր ծնողաց որոնք՝ աննշան բացառութեամբ իրենց սովորական անտար-

բերութեան ապացոյցը տուած էին մինչև իսկ իրենց զաւակաց զաստիարակութեան աւագ խնդրոյն մէջ։

Նոյն ամսոյ 23ին կիրակի օր յետ միջօրէի վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ մրցանակաց բաշխման հանդէսը. երկսեռ աշակերտներու կողմէ երգուեցան ազգային երգեր, արտասանուեցան հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն ու արաբերէն ճաւեր ու ստանաւորներ, ներկայացուեցան զուարճալի և հրահանգիչ արամախօսութիւններ նոյն լեզուներով՝ ամենքն ալ մեծ յաջողութեամբ. մանաւանդ ազդեանց արամախօսութիւնը «թերակերթ և բարեկիրթ աղջկունք» հեղինակութիւն նոյն վարժարանի բարեջան ուսուցիչներէն Տիար Կ. Նաւասարգեանի, խիստ լաւ ապատրութիւն թողուց հանդիսականներուն վրայ և դերակատար աղջիկները ստէպ արժանացան եռանդագին ծափահարութեանց։ Միայն դիտելի էր որ հանդէսի ճոխ յայտագրին համապատասխան կազմակերպութիւն մը տալու փոյթ չէր տարուած թերևս աւելորդ ծախքէ խոյս տալու մտածութեամբ . . . : Մէկ կողմէն սրահը շատ նեղ կուգար հանդիսականաց խումն բազմութեան, այնպէս որ շատերը ոտքի վրայ կենալու և մինչև իսկ ետ դառնալու կը ստիպուէին. միւս կողմէ արտասանութեանց և արամախօսութեանց համար կը պակսէր գոնէ պարզ բարձրաւանդակ մը և այս անպատեհութեամբ անհասկանալի կը մնային խօսուածները, մանաւանդ, վարժարանի Տնօրէն Տիար Յովհաննէս Սեթեանի արտասանած տեղեկագիրը, որ անշուշտ զպրոցի տարեկան վիճակին և աշակերտաց յառաջգիծութեան վրայ բաւարար տեղեկութիւններ կը պարունակէր. զժբազդաբար, գրեթէ ամբողջութեամբ անլսելի մնաց հանդիսականներէն։ Մտոցանք ըսելու որ հանդէսին կը նախագահէր Գեր. Յակոբ Աշոտ եպիսկոպոս փափագեան չըջա-

պատեալ քահանայական գոսէն. անտարակոյս տիրոջ ազմէն չտուելու վնին էր որ մոռցնել առաւ սրբազանին հանգէսը պահպանելով մը փակելու աւանդական սովորութիւնը:

Մրցանակաբաշխութենէ յետոյ վարժարանի բակին մէջ մանկապարտէզի պզտիկները իրենց վարժուհիին առաջնորդութեամբ կատարեցին սլաքեր և սիրուն մարզանքներ և երգեցին մանկական երգեր. միայն անպատեհութիւն մը, որուն պատասխանատուութիւնը չենք գիտեր որովհայ կը ծանրանայ, զժողովութիւն պատճառեց շատ ծնողներու, որ մասնաւորապէս պզտիկներուն համար եկած էին. այդ անպատեհութիւնն էր այն յապաղումը, որով փոքրիկները շատ ուշ հասան վարժարան. մինչ շատեր անհամբեր սպասելէ յետոյ մեկնեցան՝ հետերնին ամենելով պըզտիկներու մարզանքները անտեսելու իրենց բուն փափազը:

Ազլկանց վարժարանի սրահին մէջ ՚ի տես գրուած էին քառատունի չափ ընտիր ձեռագործներ որոնք ըստ կանխորոշ յայտարարութեան վիճակահանութեան գրուեցան ի ներկայութեան հանդիսականաց:

— Ամսոյս 23 կիրակի օրը — որ հայ նահատակներուն յիշատակին համար կատարուելիք հոգեհանգստին օրը պիտի ըլլար ու չեղաւ — զարմանքով տեսանք ոստիկաններու խմբակ մը մեր եկեղեցւոյ բակը բազմած, կարեւոր պաշտօն մ'ստանձնած ըլլալու երևոյթով: Ի վերջոյ Տ. Յ. Աշոտ Սրբազանի քարոզէն մակաբերեցինք թէ՛ նախընթաց օրը խեղօֆ-Դաւիթի մը կողմէ եկեղեցւոյ դուռը փակցուած սպառնական ազդ մը պատճառ տրուած է ուրիշ ո՛չ նուազ խեղօֆներու այդ զգուշական անխմտտ ու անպատուարեր միջոցին դիմելու: Այդ ազդին շարժառիթն եղած է արտասահմանի քանի մը թերթերուն մէջ տեսնուած այն լուրը թէ Պատրիարքըն Օբմանեան՝ Սուլթանի հրամա-

նաւ՝ Ղահէյի համաժողովին հեռագիր մ'ուղղած է, խնդրելով որ անվաւեր նկատուին բոլոր հայ զապուլթներուն դիմումները...:

Ռոստիկաններուն ներկայութիւնը որ զրգուեց ժողովրդին արգար զայ, բոլթը, կը պարտինք այն Մենմ-Ազալին, որուն հունգարական կառածիգ նժոյգները կը վրնջին յաճախ եկեղեցւոյ դրան առջև, և որ քիթը կը խօթէ առ հասարակ ազգ. ամեն հաստատութիւններու մէջ, որոնց հարկաւորագոյնն ի՛նք շինել տուած է արգէն:

Այս ցաւալի միջադէպն անգամ մ'ալ առիթ կուտար մեզ նշաւակելու պժգալի արարքն այն ինքնակոչ վարիչներուն, որոնք կը կարծեն թէ՛ իրենց զոյգ զոյգ կառքերն ու ազարաններն իրաւունք կուտան իրենց ամեն ազգ. գործերու խառնուելու, հոգ չէ թէ չունենան որևիցէ հմտութիւն և նոյն իսկ ստացած չըլլան ժողովրդին բուէները:

ԼՐԱՔԱՂ

Եարժումի 133 թիւին մէջ կը կարգանք հեռակալը:

«Փիւնիկ կը հալորդէ, որ Գահիրէի միթինկին ներկայ են եղեր չուրջ 600 հոգի: Խորհուրդ կուտայինք Փիւնիկի չեղած «բաղեր օդը չնետել. Պ. Գալֆայեան ընտրուեք չէ Պ. Չէրազի օդներու համար: Մեր Ալեքսանդրիոյ թղթակիցը մանրամասն գրած էր տեղւոյն միթինկի անյուզարձը և ատանկ բան մը չէ եղած հոն: Թերեւս առաջարկ մը եղած է ու չէ ընդունուած... այն ատեն չտրուած որոշման մը դէմ հարկ չկայ փայտը ստրով կուուելու ելլալ»:

Արտասահմանի հրապարակադրութեան այդ կեղտոտ ներկայացումը յիշը Փիւնիկի երեւումէն ի վեր կատաղութեան հիւանդութենէ բըռ-

նըւած կ'երևի. լեզուն դուրս ձգած, աչքերը գոցած, աջ ու ձախ կը փորձէ խածնելու. ի՞նչ ընէ, վարակուած է գարավերջիկ հայութեան կուսակցամուլթեան ախաէն: Ոչ թէ իբր պատասխան, այլ միայն այդ ստայօդ տողերուն արժէքը մեր պատ. ընթերցողներուն հասկցնելու համար նոյնութեամբ կը հրատարակենք, Ալեքսանդրիոյ Միթինիկին մասնախմբին քարտազարին կողմէն մեզ ուղղուած հետևեալ նամակը.

«Յարգելի բարեկամ.

«Կը հաստատեմ շարժութ օրուան հեռագիրս, նոյնպէս և կիրակի գիշերուայ գրած նամակս: Կարգացինք ուրախութեամբ թերթերուն մէջ Միթինիկի յաջողութեամբ կատարուելը. կը փութամ տեղոյս Մասնախմբին կողմէն Ձեզի հստորդելու որ՝ մտադիր եմ Պ. Գալճայեանը պատգամաւոր նշանակելու մեր կողմէն Լաւնէյ դրկելու համար. արդէն Պ. Գալճոսեանը Երասիա երթալու որոշումը տուած լինելով, յարմար կը գտնենք իրեն իրաւունքներ տալու որ Ձերազի հետ խորհրդակցօրէն՝ տանին պատգամաւորական միասնակ. մեր կարծիքով Պ. Ձերազին բոլորովին առանձին թողնելը, սակայն լիազօրութիւն մը անոր, այնքան նպատաւոր չպիտի ըլլար, որքան իրեն հետ ընկերակցելով մէկ ուրիշը. օրինակ Պ. Գալճայեանը: Ի հարկէ Ձերազին զրկելու էք Ձեր inactionները, բայց շատ ալ մարդու մտիկ ընողներէն չլինելով, նա իր ուզած ճիւղով կ'ախարհէ չափ վերջին տարիներս անոր ռուսաւոյճարիւնը ակներև է. որոշ ուղղութեան մը յարած չըլլալով, կը վախցուի որ Պ. Սթաալի ու անոր ընկերներու փշերուն շատ քուի. բան մը որ մեզի աննպատակ ըլլալ կը կարծուի: Եթէ տակաւին Ձերազին Ձեր Տեղեկագիրը չէք ուղարկած, կարելի չէ՞ր արդեօք որ յիշեցնէիք անոր այդ ուղղութեան (ուստական) վտանգաւոր կողմերը, յանձնարարելով մասնաւորապէս իրեն,

աւելի տեսնել ամերիկական, անգլիական և ֆրանսական պատգամաւորներուն հետ. արդէն որիչներ՝ կիմանանք որ այդ ընթացքին պիտի հեշտեւին: Ուրախ պիտի ըլլայինք Ձեր որոշումներու մասին տեղեկութիւններ ստանալով Ձեզմէն. արդեօք Ձեր միջոցուն կամիդէն իրաւասութիւն չէ՞ր կարող ունենալ, իբր աւելի պատշաճ կարգադրութիւն մը Ձերազին հետ միացնելով նաեւ Պ. Գալճայեանն ալ. կը կարծենք որ այս combinationը աւելի յարմար է. այդ պատգամաւոր մեկէն ևս Ձերազին կուսակցի մեկ մասնիկ Պ. Գալճայեանին ընկերակցութեամբ: Եթէ Եղիպտոսէն երկու առանձին պատգամաւորներ ուղարկելն այնքան լուրջաւորութիւն չ'ընդունէ թերևս օտարականներու վրայ. մինչդեռ կարելի էր՝ միացնելով, աւելի զօրութիւն մը տալ մեր պատգամաւորութեան:»

—Տարիներէ ի վեր հայ թատրոնը դադարած է լսեցնել ձայնը մարդկութեան մեծ տառապողներուն. իսկ իւտարի բարձանց վրայ, Գուրեան յաւիտեանական լուծիւնը կ'երգէ, այդ լուծեան մէջ թաղելով մանուկ թատրոնը ու սիրոյ քնարը: Ազամեանն սմայի թողուց թատերաբեմն ու գնաց Համիլթի խորհրդաւոր խաղը խաղալու դերեգմանի անգլանդին մէջ, իսկ Թրեանց իր վերջին հեղնութիւնը հեզնեց Թիֆլիզի թատերաւարահին մէջ. ուր վերջին քրքիջները քաղեց և մեկնեցաւ կեանքի կատակերգութիւնն ալ. հետը տանելով: Այսպէս հայ թատրոնի զօրապետները մէկիկ մէկիկ քաջուեցան ասպարէզէն և այսօր, վաղեմի, բայց միշտ թարմ ու կորովի գէմք մը, հայ թատրոնին նահապետը Գասուրեանն է, ճգնաժամի կուրը կը կուրի Փարիզի Լաշարիթէ հիւանդանոցին Ա. յարկին Սէն Լուի որահին թիւ 9 մահճակալին մէջ:

Իսկ հաս, բուրգերու բարձրութեան ներքև, Լեպրեպիմի միակ տիպարը Տիար Պէնչեան, թշուառութիւնը կը

քաշկուտէ կ'անցնի անտարբեր բայց միշտ դժգոհ ու գանգատող միշտ-վայրի մը մէջէն:

Այս խորհրդածութիւնները ընել տուաւ հետեւեալ նամակը, զոր անկողմնակալութեամբ կը հրատարակենք:

**Տէր Խմբագիր**

**Փխնիկ լրագրոյ**

Գերասանական խմբին կողմանէ տրուած Արշակ Բ.ի ներկայացման ծախքին ու հասոյթին հաշիւն կը ներկայացնենք Ձեզ, խնդրելով որ հաճիք Ձեր պատուական Հանդիսին մէջ հիւրընկալել:

Իրաւունքի 30 թիւին մէջ զմեզ պախարակող Գահիրէի դատարկապորտ թղթակիցը թող հաստատէ թէ Ազգ. Պատրիարքարանէն և կամ Վանայ կարօտեալներուն կողմէ պաշտօնով մ'եկած է Գահիրէ, թէ ո'չ ինքնին դատախազ եղած է. մենք սովորութիւն չ'ունինք մեզ դէմ յարձակողներուն պտտասխանելու, բայց սոյն ներկայացման բարոյապէս պաշտպան կանգնող պարկեշտ վաճառականի մ'անունը մեզ հետ խառնրելուն համար, պարտք կը համարինք սոյն երկտողով խնդրել որ բարեհաճիք ի զգաստութիւն յիշեալ դատարկապորտին, Ձեր կողմանէ ազգին ներկայացնել այս հաշիւը որով զրպարտուած յարգելի վաճառականը և անարգուելու վարժուած խեղճ գերասաններուն պատիւը և իրաւունքը պաշտպանած պիտի ըլլաք:

**ՀԱՍՈՅԹ**

Ընդհանուր հասոյթ	1605
Տիրար Անանեանցի նուէր	50
» Յ. Ալփարէ նուէր	5
	<hr/>
	1660

**ԾԱԽՔ**

Թատարնի վարձը 70 ֆրանգ	261
Նուագածուններուն	160
Տպագրական ծախք	130

Ստիրիչին կեղծ մայերու համար	50
Սպառապրտի և դրահի ծախք	45
Հագուստի վարձք և ծառաներուն	60
Պ. Վարդան Բաղուեանի ծախսած սամսակներուն 10 0/0	40
Պ. Լ. Ատրուսի' ընդօրինակութեան	30
Յրօւիչ Պ. Յակոբ Ճանկողեանի	25
Անձնուէր գերակատար Պ. Վ. Բաղուեանի	50
» » Պ. Օ. Տէյրալիճ.	50
Պ. Լ. Ատրուսի' յուշարարութեան	40
Գերակատար Պ. Ատիկ Զառէեանի	48
Տիկ. Մարի Պէլլեանի	60
Պ. Երուանդ »	56
Պ. Շուարշ Գարագաշեանի	40
Խմբագրեալ Պ. Ս. Պէլլեանի	60
ՍՈՎԵԼՈՅ Բ...ին	455

1660


**ԵՐՈՒԱՆԻ ՊԵՆԼԵԱՆ**

Մեր կողմէն սա միայն կատեցնենք որ գերասաններն իրենց բոլոր թերութիւններով հանդերձ՝ պէտք է որ վայելեն հանրային համակրութիւնը, քանի որ անոնց պաշտօնը մեծ է և կարևոր. անոնք ներկայ սերնդին հրահանգիչներն են. և եթէ իրենց կոչման բարձրութեանը վրայ գտնուին, նախախնամական գեր մը կատարած պիտի ըլլան այս ազգին մէջ: Գալով այն վաճառականին, որուն պարկեշտութիւնն ու եռանդը կասկածի տակ գնել փորձած է Իրաւունքի թղթակիցը, մտռէն ծանօթ է մեզ իբրև լուրջ ու գործօն երիտասարդ, իր երկրին անձնուէր աշխատող մը. հետեւապէս կը յայտարարենք որ այսուհետև կիրքէ աւելի ուզգամսութենէ առաջնորդուին թղթակիցները կամ թղթակցի մարմնաջ ունեցողները, եթէ կուզեն որ իրենց գրածները կարգացուին լրջօրէն:

Տիրար Պ. Կարապետեան 20 օրինակ էսիզեանի երգարան նուիրած է Կիպրոսի որբանոցին, 30 օրինակ ալ Իզմիրի Բարաթաշի Մանկապարտէզին:

# ԹԷՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.



48, Շարկ Ապս-իւլ-Ազիզ, 48

Սոյն բարեհամբաւ վաճառատան շուրջ 20 տարուան զոյաթիւնը Պոլսոյ մէջ, այս տարի ալ տեղս մասնաձիւղ մը բացած ըլլալը՝ զօրաւոր ապացոյց մ'են իր ապրանապ աղ նուաթեան, գիներու չափաւորութեան և աւելին, յաճախորդաց գոհ մնալուն. աւելցընելով այս յատկութեանց վրայ Սէյլսնէն, Ճափայէն, Չինաստանէն ու Հնդկաստանէն ընտիր ապրանքներ ուղարկի ներմուծելու տառելութիւնը, այս կարեւոր հաստատութիւնը կարճ ժամանակի մէջ արժանացած է հանրային համակրանայ և պատիւ կը բերէ տեղւոյս աղգայնութեան:

Պատ. յաճախորդաց աւելի գոհացում տալու համար, վերջերս յատկապէս Լոնտոնէն բերել տուած են ընտիր թէյեր աւան եզանակի մանուսանգ ամասուան համար:

Կ'ուզէ՞ք ստուգել ներկայ յայտարարութեան պարունակութիւնը, հաճեցէ՞ք անձամբ երթալ յիշեալ վաճառատունը, ուր իբրև փորձ՝ ձեր ներկայութեան կը պատրաստուի և կը մատուցուի մէկ, եթէ կուզէք երկու գաւաթ թէյ:


Սոյն վաճառատունը՝ Տիկին Աննա Ռաֆֆիի յանձնարարութեան վրայ ստանձնած է վաճառել անմահ փարասանին հայրենաշունչ երկերը. նոյնպէս Աղգ. Հիւանդանոցի սիկարի թղթերն ընտիր տեսակէ:

# Բ Ա Ն Ա Ս Ե Ր Հ Ա Ն Գ Ի Ս

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ  
ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ  
ՏԵՐԻՆՈՒՅԵԱՄԸ ՏԻՄԱՐ Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆԻ  
և աշխատակցութեամբ հայ և օտար արեւելագիտաց

Տարեկան բաժնեգինն է 4 դրքի համար 20 ֆրանք ամեն տեղ. իսկ մէկ գիրքը, 100 էջով, կ'արժէ 6 ֆրանք: Դիմել առ.


Mr. BASMADJIAN  
112, Boulevard Rochechouart 112  
PARIS



## ՏՕԲ. ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ԺՕՐԺ ԷՎԼԵԱՆ

Ապսին, Շարկ Բուպրի, Նո 55


Կը պատրաստէ կեղծ ահուաներ ամենափափուկ բերաններու և ամէն հասակի յարմար, ամերիկեան ամենավերջին գրութեամբ. վայրկենապէս կը դադրեցնէ ահուայի ցաւերը, նորագոյն մէթօսով կը լեցնէ փտած ահուաներ, ազնիւ ապրանքներով կատարելապէս կը բուժէ լինտերու և բերնի զանազան հիւանդութիւններ: Իր լեցուցած ահուաներուն տոկունութիւնն առնուազն երկու սարի կ'երաշխաւորէ:



## ԴԵՂԱՐԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Շարա Մօհամես-Ալի Պազարին դիմացը

Խաչատուրեան եղբարց սոյն հաստատութեան մէջ խնամով կը պատրաստուին ամեն տեսակ դեղորէք չափաւոր գներով ու կը կատարուին հայ մասնագէտ բժիշկներու խորհրդակցութիւններ:



## ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Մաթարիա, կայսրանէն ղէպի հարաւ 1 րօպէ հեռաւոր տուն մը, 14 մէթր երկայն 11 մ. 90 լայն, բարձրագիր, 4000 քառ. մէթր տարածութեամբ պարտէզ, աղիւս ցանկապատով, մանտարիների, նարնջի եւլն. ծառերով, ջրհոր: Փափագողները դիմեն Տիար Սեդրաք Օտապաշեանի:

# ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԵԻ

Շարհ Մօհամմէ Ալի Փիհ'նիկի խթնութեամբ

ՀԻՄՆԱԳԻՐ-ՏԵՕՐԷՆ

## ՍՄՔԱՏ ԲԻՐՔԱՏ

Կաւանդուին հայերէն, անգլիերէն, ֆրանսերէն եւ պարսերէն լեզուներ, նախակրթական եւ երկրորդական ուսմանց ու գիտութեանց հետ, խնամախառն ազգային դաստիարակութեան մը հիման վրայ:

### ՏՕՔԹ, Ն, Պ, ՔԷՉԷՃԵԱՆ

Բժիշկ վիրաբոյժ վկայեալ յ'Ամերիկա

Ժամանակիս նորագոյն մեթոտներու հասածայն կը բուժէ ներքին եւ արտաքին ամեն տեսակ հիւանդութիւններ:

Իւր պաշտօնատեղին, որ կը գտնուի Շարհ Ապրա-խը-Ազիկի սկիզբը Գեղարան Օսմանիցի գիւմարի աստիճան շէնքին օղջ, հիւանդներ կ'ընդունուին ամեն որ աստատեան ժամը 10—12 և կէս օրէ վերջ ժամը 3—5 (ը. ե.):

Ազրատ հիւանդներ ձրի կը դարձանուին:

### Դ Ի Մ Ե Յ Է Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ  
ԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց ԳԱՀԻՐԷ

- Եթէ կուզէք սխառն և ընտիր սակի ժամացոյցներ. 120 դր. և մինչեւ 2500 դր.
- Եթէ կուզէք արժաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր.
- Եթէ կուզէք նիւրէլ ժամացոյցներ 22 դր. և մինչեւ 130 դր.
- Եթէ կուզէք արատի և քննօրէրազրեպան բանտիւղներ գաղղիական եւս մերիկեան.
- Եթէ կուզէք նորածն շղթաներ ոսկի, արծաթ եւ ոսկեպաս
- Եթէ կուզէք այլևայլ գոհարեղէնք աղամանդեալ, ոսկի, արծաթ, ոսկեպաս:

ՍՄՔԱՏ ԲԻՐՔԱՏ

ՍՄՔԱՏ ԲԻՐՔԱՏ

### Դ Ի Մ Ե Յ Է Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ  
ԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց, ԳԱՀԻՐԷ

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

#### ԳԻՐՔ ՈՒՉՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր հայ հասարակութեան զխրութիւն մը տալու մտօր կը ծանուցար թէ Հայերէն ամեն գիրք (Դասական, Դպրոցական, Գիտական, Գրական, Արուեստական, Բանասիրական, Վիպական եւլն.) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պօլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է զխրամտաշելի պայմաններով ձեռք բերել՝ գիտելով Տիար Կ. Նաստարեանի կամ Կեղ. Կրթարան: